ԹՒ. ՏԱՐԻ 3423 (Ն. Տ.) 24 ՅՈՒԼԻՍ 1895 — 12 ՅՈՒԼԻՍ 1895 — 2 ՍԕՏԵՄԲԵՐ 1313 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՈՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه اداره‌سی غزته‌نك آروه‌لك اوده‌غلطه اوده‌سی

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դրամական արժէք	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան մրցմամբ	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր թղթի վրայ մասնաւոր տպագր. Տարեկան Օտ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախքը միօրինակ	Դրուշ 50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ ալ գրութիւն եւ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Շիքակոյի Նորթուէսթրրն համալսարանի այն տարուան երեք հարիւրէ աւելի շրջանաւարտներուն մէջ գտնուած էր, իր ազգն նպաստելու համար մինչեւ կըրթական այդ բարձրագոյն հաստատութիւնը, Պ. Նազարէթ Գ. Տէրտէրեանի ձեռք բերած յաջողութիւնը կրկին արժանիք պիտի ստանայ։ Զորս հինգ տարի առաջ, երբ պանդուխտ երիտասարդը կը պատրաստուէր Ամերիկայ ուղեւորիլ, ճամբու ծախք մը միայն ունենալով գրպանը, հաստատապէս միտքը դրած էր մէկ կողմէ իր ապրուստը ճարել առօրեայ աշխատութիւններով ու միւս կողմէ հետեւիլ համալսարանի դասախօսութիւններուն, իր աղգակիցները ու բարեկամները, առանց զինքը հեգնելու կամ կասեցնել ուզելու, ծայրայեղ կը գտնէին այս անձնվստահութիւնը։ Ինք, ընդհակառակը, շատ բնական կը գտնէր, և իր այսօրուան յաջողութիւնը իրաւունք տուաւ իրեն։ Ցամաքութիւնը եթէ յատկութիւն մը կրնայ համարուիլ, այն ալ ամենէն աւելի աշխատասիրութեան մէջ է, և ամեն անգամ որ ազգաւոր ուսանողներու քով կը գտնենք այդ յատկութիւնը, չենք կրնար զսպել գոհունակ զգացման մը արտայայտութիւնն։ Այդ տեսակ երիտասարդներ ամենէն աւելի համակրելի օրինակներն են Եւրոպա կամ Ամերիկա գտնուող հայ ուսանողութեան։ Ամիսը որ կը բոլորի, չի բերեր իրենց դրամատունէ մը գանձելի փոխանակագիր մը որ ապահովէ յաջողչորս շաբաթներու ծախքը։ Օրը օրին ապրիլ, օտար ու անծանօթ միջավայրի մը մէջ, զրկանքներու, նիւթական անձկութիւններու տակ, այսօր չի գիտնալ թէ ինչպէս պիտի ճարէ վաղը, իր ձեռքին ու մտքին վստահիլ՝ առանց մէկուն բեռ ըլլալու պարկեշտօրէն ճարելու համար իր ապրուստը, պզտիկ անձնազոհութիւն չէ զոր կրնեն անոնք իսէրուսման և գիտութեան։ Իրենց համար՝ կեանքի պայքարը կը սկսի ոչ թէ իրենց ասպարէզը թեւակոխած վայրկեանէն, այլ համալսարանական դրասեղաններուն վրայէն։ Այս տեսակ դժուարութիւններով լեցուն քառամեայ շրջան մը բոլորած էր Սեբաստացի երիտասարդը որ պսակաւոր կը հանդիսանայ Շիքակոյի համալսարանէն։ և վկայականներու բաշխման հանդիսաւոր օրը, երբ ամերիկացի ուսանողք շրջապատուած իրենց ծնողներէն ու սիրելիներէն, ծաղկեփունջեր կը ստանային ի նշան խնդակցութեան, ինքն ալ ունեցեր է իր սակաւաթիւ ազգակիցները որոնք այդ բանաստեղծական ձեւին տակ յայտներ են իրենց խնդակցութիւնը։

Անկարելւոր չըլլայ թերեւս ըսել, թէ երեք հարիւր ուսանողները որոնք այս տարի աւարտած են այդ համալսարանի շրջանը, ամենքն ալ բժշկական ճիւղին չեն վերաբերիր. քանըհինգը միայն բժշկական տոքթորի վկայական ստացած են. մնացածներէն՝ 21 ուսանող և ուսանողուհի արհեստական ճիւղերու վկայական, 26ը փիլիսոփայութեան, 5ը գիտութեանց և 5ը դպրութեանց, 70ը օրէնսգիտութեան, 150ը դեղագործութեան և 30ը ատամնաբոյժի վկայական ստացեր են. առիթը յարմար է նշելու համար թէ կին-բժիշկներ ալ կան ասոնց մէջ։ Երեսուն երկու տոքթորուհի։ Բայց այս պարագաներէն աւելի, մեզի համար կարեւորն ու հետաքրքրականն այն է որ Շիքակոյի համալսարանի բժշկական ճիւղին մէջ կը գտնուին ուրիշ ինը հայ ուսանողներ, որոնցմէ երկուքը Մարաշցի, 1ը Առանցի, 1ը Եօզղատցի, 1ը Ակնեցի, 1ը Մարզուանցի, 1ը Սեբաստացի, 1ը Շապին-Գարահիսարցի և 1ը Թալասցի։

Շիքակոյի մեր թղթակիցը որ կը հաղորդէ մեզ անոնց անուններ, չըսեր թէ ասոնք ալ՝ Նիւթապէս այն դիրքին մէջ կը գտնուին որուն տակաց Պ. Տէրտէրեան, բայց տարակուսելի է որ մեծ գիւրակիցութիւն մը ունեցած ըլլան. և ամենէն ալ, ազնիւ և ուսումնասէր տղաքներ, ծովի և ցամաքի ահագին անջրպետներ կտրած են՝ երեթալ պատրաստուելու համար բարձրագոյն գիտութեանց ու արուեստներու։ Բարիը, կ'երեւայ թէ, մեր քաջքնի ծնողներուն մտատիպարը կը մնայ դեռ, մինչ գաւառայի ուսանողները լաւագոյն կը սեպեն իրենց մտաւորական աշխատութեան համար այնպիսի կեդրոններ ընտրել ուր գործնական կեանքի, ժիր գործունէութեան ու մտամտիպ աշխատութեան մթնոլորտի մը մէջ գտնուին, փոխանակ մեկ կեանք մը ուշատ ոնդամ մղորեցնող օրինակներ տեսնելու իրենց շուրջը։ Այդ ինքուսանողներէն զատ, Շիքակոյի մէջ կան նախորդ տարիներու շրջանաւարտ քանի մը հայ տոքթորներ ալ, որոնք իրենց բժշկական արուեստն ի գործ կը դնեն հիւանդանոցներու մէջ։

Նոր Աշխարհի հայ ուսանողներուն այս յաջողութիւնը քիչ անգամ յիշուած է մեր մէջ։ Իր բոլոր օգտակարութեամբն հանդերձ, ոչ միայն նորութեան հրապոյրն ունի, այլ մանաւանդ այդ գաւառացի երիտասարդներուն յանձն առած զոհողութիւնները շատ աւելի խնդակցութեան արժանի կը հանդիսացունեն զանոնք քան ինչ որ վարժուած ենք արտայայտելու Եւրոպայի հայ ուսանողներուն յաջողութիւնները լսելով։

Տ.

ԿԻԼԻԿԻՈՅ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Մոռցուած չեն հանգուցեալ Տ. Մատթէոս Կաթողիկոսին և Տ. Մակար Կաթողիկոսին դրամոց և ընչից յափշտակութեան տխուր դէպքերը։

Բարձրաստիճան եկեղեցականի մը մահուամբ, այդ տեսակ իրողութիւններ նոր կրկնուիլն երբեմն, որոցմէ ոմանք մամուլը և հրապարակը կը դրդրեն առ ժամանակ մի, իսկ ոմանք անձայն, անչշուկ կը մարսուին անկուշտ ոսկորներու մէջ։

Քանի՛ քանի՛ գուշմարներ այդպէս փայլաւոր փճացեր են կաղտոտի կամ յայտնի։

Կիլիկոյ Մկրտիչ Կաթողիկոսին դէպքը ամենուրեք համբաւուած է։

Կաթողիկոսը դեռ չմահճանած, չենք գիտեր ինչ խորհրդով տրամադրուած էր Ս. Երուսաղէմի կտակել քանի մը չարժական ու անշարժ կալուածներ և 1000 ոսկւոյ հնչուն գումար մը։

Այս առթիւ Երուսաղէմէն ի Հալէպ զրկուած էր յատկապէս Պարսկաստանի և Հնդկաստանի նուիրակ՝ Սրբ. Տ. Գարիրէլ Ս. վարդապետ Անապլեան, բանակցելու համար Տ. Մկրտիչ Կաթողիկոսի հետ, և համաձայնութեան մը չի գալուով՝ ձեռնունայն վերադարձած էր յԵրուսաղէմ։

Ոմանք կը հաստատեն թէ՝ Ս. Յակոբեանց միաբանութիւնը չէ հաճած ընդունիլ Կաթողիկոսին կտակը, այլ փափաք յայտնած է որ Սսոյ Աթոռին ի պայծառութիւն՝ կտակէ իրեւ վիճակին Կաթողիկոս։

Ինչ որ է, Տ. Մկրտիչ Կաթողիկոս վերջին անգամ Հալէպ գալով հիւանդացին, 7 ամսոյ չափ մնացած է, 15,000 դրուշ ծախք ընելէ տալով տեղւոյն Առաջնորդարանի կալուածոց մնուցեկին, և ի փոխարէն՝ մուրհակաւ թերհաշիւ 100 օսմ. ոսկի վճարած և փոխանցած է 1894 Նոյեմբեր ամսուն մէջ։

Հանգուցեալ Կաթողիկոսը կտակագիր մը թողած է, որ այսօր ի Հալէպ կը գտնուի։

Այդ կտակագիրը՝ օրինական տրամադրութեան համաձայն պատրաստուած է, որով Տ. Մկրտիչ Կաթողիկոս Օսմանեան Դրամատան մէջ ձգած 500 ոսկին՝ Հալէպի Փառասէր-Մանկանց եկեղեցւոյն վերաբերող ծանուցեալ տրտին կիրառութեանը համար սահմանած է։

Թակ մնա 500 ոսկւոյ պատրաստ դրամէն ալ՝ 100 ոսկի թերհաշիւ տրուէն տուած էր Հալէպի Առաջնորդարանի ծախուց, և 400 ոսկին՝ յետ վախճանման, Կաթողիկոսի շուրջը գտնուողներէն համբարձուած է։

Ցարդ ոչ ոք գիտուեց, ոչ ոք հարցափրեց զայս։

Կաթողիկոսին ախոռապանը՝ որ միանգամայն հանգուցեալին գործակատարն էր, այսօր առանց Պատրիարքարանի գիտութեան, սարկաւագաց ու վարդապետաց է ի Սիս, 95 ոսկի միանուագ գումար մը ցնծալով։

Ցաւալի չէ թէ ո՞ւր մնացած է Սիսուանայ մայրավանքին պայծառութենէն և քանի քանի վանականներու կոկորդէն խլուած 23 տարուան խնայողութեան ոսկեկոյտը, քանի որ այսօր Մկրտիչ Կաթողիկոսին և Սսոյ Կաթողիկոսարանին սնուցեկները պարապ են բոլորովին, և միայն նորագ հանգուցեալ Կաթողիկոսի ընչից և գործոց հետեւեալ չոր ցուցակը ունինք ի ձեռին.

1 Առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան, որ յանձնուած է այժմ կառավարութեան։

2 Հայրապետական պնակէ, 1 ժապաւենով ադամանդազարդ խաչ, 2 մեծ և փոքր գոնարազարդ լանջխիրք նշաններ, 1 ոսկի օգտակով արծաթեայ խաչ, 1 ոսկի ակնակուռ խաչ, 1 արծաթեայ խաչ, 1 գիրքարա և շուրջը մանր ադամանդներով զարդարուն կաթողիկոսական մատանի, 1 շրջակիծը ադամանդակուռ յակինթի մատանի՝ ոսկեայ տուփի մէջ, 1 ադամանդազարդ հաղուագիւտ գեղեցիկ քարով մատանի՝ ոսկէ տուփով, 1 ադամանդաձիր յակինթի մատանի եւս, 1 գրակոնաթիկեայ փոքր ադամանդ, 6 հատ Կ. Թաղիկեանի պաշտօնին վերաբերեալ փոքր և մեծ կնիքներ որոց երեքին վրայէն անունները սրբուած են, 8 ոսկեզօծ արծաթ փոքր խաչեր, 1 պղնձեայ խաչ որ հնութիւն մ'է, 5 արծաթ անոյշի զգալ, 1 արծաթեայ թիւէ չինուած գգալ, 3 արծաթակուռ քթախոտի տուփ, 2 արծաթ շրջանակով քթախոտի տուփ, 3 կապ ձուլածոյ արծաթի, 1 մէջտեղը աբաջաձեւ թաշկունով արծաթեայ փոքր թաս, 1 արծաթ ջրոյ մեծ բաժակ, 2 արծաթեայ անոյշի պնակ, 2 զեւլի, 3 սաթէ համբիչ, 2 ոսկի ակնոց, 1 արծաթեայ ակնոց, 2 հասարակ ակնոց, 3 մկրատի, զեւլիի և գրագրութեան վերարեւելեայ տուփեր, 2 թաշեայ փակիչ, 2 արծաթահիւս մետաքսեայ խաչբանիներ, 1 գրիչ կտրելու սատակի կտոր, 2 հաբէ վերարկու, 6 գերձանէ չինուած դրամի քսակ, 1 չէվրէ, 3 մետաքսեայ թաշկինակ, 12 բէֆիյէ, պօհճա և նմանները, 1 ոսկի ժամացոյց, 4 հայրապետական ասաներ, գլուխները՝ ոսկի և արծաթ, 14 մատանիներ այլ ունի, կ'ըսեն, այլ և այլ տեսակ, որոց մէջ ընտրագոյնը՝ կրանցուցած է եղեր իր կենդանութիւնը ատեն, 2 ադամանդեայ վեղարի խաչ, 1 լանջական ադամանդախաչ, 5 արծաթեայ թասեր, 1 ձի, 1 ջրոյ զոր Հալէպու Տ. Մատթէոս քահանան ծախած և գրամը իւրացուցած է, 1 ծրար կարեւոր թուղթերու որ պաշտօնապէս կնքուած է, 4 անտուկ զոյգեր, 6 մուշտակ և 32 մէջրա վերարկուցու ընտիր կերպաս, որ կնքեալ պահուած է յԱմասիա՝ Սսոյ սթռատակալ Ճէմիտեան Գրիգոր էֆէնտիի քով։

Ասոնցմէ զատ են ասոր բոլորուած 12,000 ոսկւոյ մօտ գումար մը և բուռ մը անթիթա քարեր, մատանիի մերկ քարեր, ինչպէս նաեւ ոսկի և արծաթ խաչերու կոստուանդներ։

Ամենց ընչաքաղցութեան մոռնուելու վտանգին մէջ են ասոնք, եթէ Ազգ. Վարչութիւնը չշտապ պէտք եղածը ժամ յառաջ տնօրինել։

Ա. Գ. ԱԳԱՊԱԶԱՆ

ԿՏԱԿԻ ՄԸ ԱՌԹԻՒ.—Կը յիշուի թէ երկու ամիս առաջ մեծահարուստ սպանիացի մը, Պ. Սօլէռ, մեռնելով, իր բոլոր ստացուածքը՝ անշարժ կալուած, արժէքներ, գրամ, երեք միլիոն ֆրանքի արժողութեամբ, Սպանիոյ խնամակալ թագուհւոյն թողած էր։ Մատթիտի լրագիրները կը պատմեն թէ թագուհին տեսնելով որ կտակը նախորդ տարիէն գրուած Թագրի վրայ գրուած է, և թէ Սպանիոյ մէջ օրէնք է որ գրչմուտը թուղթը նոյն տարւոյն համար միայն ընդունելի է, ինքնաբերաբար իմաց տուեր է այս անկանոնութիւնը, յայտարարելով թէ չի պիտի կրնայ ընդունիլ Պ. Սօլէռի կտակած հարստութիւնը։

Գործը ձեռնկնա, դատարանի յանձնուած է, և ապասելով անոր վճռին՝ հանրային կարծիքը և պարտական մամուլը կը գովեն թագուհւոյն օրինապահութիւնը ու փափկանկատութիւնը։

ՍԱՌԱ ՊԷՌՆԱՐ.—Մեծանուն դերասանուհին, Բարիզի թատերական եղանակի վերջը, Անգլիա գացած էր, ուր անցուց հինգ շաբաթ, երեքը Լոնտոն և երկուքը գաւառային քաղաքներու մէջ. Թատերական ներկայացումներ տալով Պրամիրն, Լիսա, Լիվրալ, Մանչէսթրը, Կարկոն և Խոմբարդիի նոյն թատերական ընդունելութիւնը գտաւ որով օգտուեցուած էր բրիտանական ստանդին էջ. Մասնաւորապէս ի Մանչէսթրը, արուեստագիտական ճոխարեւ յաղթանակներ տարաւ Տիկին Սառա Պեռնար յաւելեալ սկզբը Բարիզ տրաձաւ ու քանի մը օր մնալէ ետք, ծովակերեայ գիւղ մը գնաց օգտագործելու Ցառաջիկայ ձմեռ ինք չի պիտի խաղայ Արենէսանս թատրոնին մէջ որուն տնօրէնութիւնը կը պահէ միշտ իր մարդած ու պատրաստած արուեստագէտներուն պիտի թողու զայն, և ինք թատերական շրջան մը պիտի կատարէ Եւրոպայի ու Ամերիկայի գլխաւոր քաղաքներուն մէջ։ 1896—97ի շրջանին միայն պիտի վերադառնայ բարիզեան բեմին վրայ։

ՔԱՀԱՆԱՅԻՆ ՆԻՒԹԱԿԱՆԸ

Առաջիկ Ծխական կոնդակի վերաբերող քանի մը հին կոնդակներու պատճէններ կան.

Արմաշու և Նիկոմիդիոյ Պատրիարքական հանգուցեալ փոխանորդ և տեղապահ Տ. Ստեփաննոս Արքեպիսկոպոսէ.

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տեառն Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի և Առաջնորդ Տեղապահ Զարեհափան Ս Աստուածածնի հրաշալի վանուցն Արմաշու և Նիկոմիդիոյ և բոլոր թեմից Նորին Յուրմէ սիրով Ս. հոգւոյն ծանուցեալ Առաքելական Աթոռոյս բարեճոխ քաղաքին՝ Ս. Հրէշտակապետ, Ս. Կարապետ, Ս. Լուսաւորիչ և Ս. Ստեփաննոս եկեղեցեաց մաքրակրօն քահանայք, զի ի տարեւ գրեալ ժողովուրդս զոլով Տէրունի, շնորհեցաք Տ. Պետրոս քահանային Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ, որք են յանուանէ այսորիկ (Կը թուէ տուեն ը) զի հովանաւոր ըստ հնարիս քահանայապետին Քրիստոսի, և առնուցու իւրաւունս ի կենս անեալ և ի ննջեցեալս ըստ սովորութեան Հայ. Ս Եկեղեցւոյ, և յայլոյ քահանայից՝ զի որ իւրեանց լինել ձեռնամուխ, զի սեպհական են ժողովուրդք Տ. Պետրոս քահանային։ Որ և լիցուք օրհնեալք Յաստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ։ Ամէն։

Նիք (ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ)

գրեցաւ ծիսի կոնդակս յամի Տեառն 1832 և յԱպր. 25ի Զարեհափան Ս. Վանայ։

Կոնդակ Յակոբ Պատրիարքի

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տեառն Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի և Սրբազան Պատրիարքի մեծի Կիրայանիստ մայրաքաղաքին Պոլսոյ և միանգամայն Աստուածընտիր Առաջնորդի Արմաշու Զարեհափան Ս. Աստուածածնի և հանայն վիճակաց նորա փոխանորդ և Տեղապահ Տէր Յակոբ վարդապետին Յորմէ սիրով Ս. Հոգւոյն և Քրիստոսական ողջունիւն և օրհնութեամբ ծանեալ Զենիդիէրու օրհնեալ գիւղի մաքրակրօն քահանայք և բարեպաշտօն երեւելիք և համայն ժողովուրդք մեր ի Քրիստոս, զի այսորիկ ստորագրեալ ծախքս Տէրունի զոլով չնորհեցաք բարեկրօն Տ. Արսէն քահանային, որք են այսորիկ։ (Կը թուէ 55 տուն)։ Զայսոսիկ վերադիրեալ ծուխսն, զորս չնորհեալ եմք միայն Տ. Արսէն բարեշնորհ քահանային, սա ունի հովանի ըստ ձգմարիտ հոտապետին Քրիստոսի և վայելել զքահանայական սովորեալ և կանոնեալ իրաւունս թէ՝ ի կենդանեաց և թէ ի նոչեցելոց, զի այսու պարտաւորութեամբ և իսքն կարասցէ արթնութեամբ ջամբել զհովանաւոր դիրարուս Աստուածային օրինացն և պատուիրանաց, և որպէս չէ օրէն ձեռնամուխ լինել ումեք այլոց քահանայից վերադրեալ ծիսիցս բաց ի սմանէ՝ ասդանպէս և սա ինքն միայն վայելեալ զհաստ քահանայական իրաւանցն այնոցիկ հօտից, ուստի սայ համարս առաջի արդարադատ դատաւորին Յիսուսի Քրիստոսի թէ ահա՛ ես և մանկունք իմ, յորում Տէր Աստուած պարգևիցս պահեսցէ։ Ամէն։

Կնիք 6 ԿՈՐ ՊԱՏՐԻԱՐՔ

Ի թուականութեան ՌՄՄԸ, յամի Փրկչին 1832 յԱպրիլ 28. օրհնեալ գիւղն Զէյթունլու։

Առհասարակ քահանայից նիւթականին ապրուստի մասին այսչափ ինչ գրելէ յետոյ սկսիմ ի վեր հանել այն ձեւակերպութիւնները պայմանները, որովք կը ձեռնադրուին այժմ ընծայուածք ի Պոլիս, և ցոյց տալ այն միջոցները որովք կարող կըլլան սիրանալ ծուխերու և պարզել այն քահանայական ընծայքը որս կը հետեւին քահանայք ամենք, ինչ որ կարգիլէ Ս. Աւետարանը, Առաքելոյ թուղթերը, հայրապետական կանոններն, իրենց կոչումը, իրենց ուխտը։

ՍԱՄՈՒԷԼ ԵՐԼՑ

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔԻ» (27)

ԺԻԼ ՏԸ ԿԱՍԹԻՆ

ԲՕԼԻՆ ՏԸ ՄԵՐԻԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Բօլին թեւերը կը գալարէր։

—Պիտի մեռնի՞, Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, արդէն բաւական դժբախտ չէ՞։

Ցեղոյ խօսքն իր մօր ուղղելով ըսաւ.

—Փողացաւ է, այնպէս չէ՞։

Խեղճ կինը յանգէտս պատասխանեց.

—Չեմ գիտեր, աղջիկս։

—Բայց, մի՛ պակէք ինձմէ։

—Բան մը պակած չունիմ... չեմ գիտեր։

—Այս, փողացաւ է, ըսաւ Բօլին վայրագ դէմքով մը, փողացաւը, այդ սոսկալի, անդարմանելի հիւանդութիւնը, որուն անունն իսկ մայրերը կը զոզացնէ։

—Բան մը չեմ կարող ըսել, յարեց պառաւուհին. բժիշկը թող պիտի ըսէ։

—Բայց առայժմ ի՞նչ ընելու է։ Չեմ կրնար ձգել որ զաւակս խղդուի։

—Ընելու բան մը չկայ։

—Եթէ փղոցաւ է, ըսաւ Մառի, պէտք է փախուիլ տալ։

Բօլին սպասուհիին դարձաւ.

—Փղոցաւէ տառապող տղաքներ ունեցա՞ծ էք։

—Այո, տիկին։

—Իմ զաւկիս պէս էին, այնպէս չէ՞։

—Աքաղաղի ճիչին նման աղաղակ մը ունէին... Ասկէց կը ճանչցուի փղոցաւը։

—Աքաղաղի ճի՛չ... ըսաւ Բօլին, այս առտու լսեցի արթնցած ատենս...

Մեծ աղաղակ մը արձակեց.

—Տղաս կորսուա՜ծ է։

—Բայց ոչ, աղջիկս, ըսաւ պառաւուհին, մի՛ յուսահատիր... Եթէ փղոցաւս իսկ ըլլայ, մարդ միշտ փղոցաւէ չի մեռնիր։

Պառաւուհին կրակին առջեւ կը բռնէր տղան, կիսահակ, որպէսզի կարենայ աւելի հեշտիւ շունչ առնել...

Բօլին անոր նայեցաւ։

Խեղճ կինը յանգէտս պատասխանեց.

Խեղճ փոքր էակը, դէմքը կապ կանչ, կ'երերցուներ իր փոքր ձեռքերը, անլուր ձիգեր կ'ընէր շնչելու համար։

Մայրը ուժգնօրէն բռնեց զայն։

—Բայց չե՞ս տեսնար որ կը խղդուի։ Ա՛հ, ո՛րչափ կը տառապի... Եթէ կարենայի օդ ներշնչել իրեն, հիւանդութիւնը քաշել հանել իրմէ։

Բերանը զաւկին բերնին վրայ դրաւ... քաշեց անոր շունչը, փոքրելով իրեն հաղորդել հիւանդութիւնը որով կը տառապէր։

—Բօլի՛ն, ըսաւ մայրը, Բօլի՛ն, խնդ ես։

—Հիւանդութիւնը տարափոխիկ է, ըսաւ Մառի։

—Է՛հ, կո՛գս։ Եթէ մեռնի, ես ալ կուզեմ մեռնիլ...

Տղան կը խորթար... Բժիշկը չէր գար։ Առ նուազն մէկ ժամ սպասել կարկ էր մինչեւ որ հոն ըլլար... Ժամ մը չքաշած Մարը պիտի մեռնէր...

Բօլին բաղուկները կը գալարէր։

—Զենք կրնար ձգել սակայն, կ'ազազակէր, որ մեռնի, հոգին փչէ մեր մէջ, առանց պաշտպանուելու... առանց փորկելու իր փոքր կեանքը... Բայց, ի՞նչ ընել, ի՞նչ ընել։

Ա՛լ աչքերէն չէր դատեր տղան, քայլ առ քայլ հետեւելով հիւանդութեան, ներշնչումմ մը փնտռելով...

Ցանկարծ բաւ։

—Եթէ կարենայի իրմէ կոկորդէն այս մորթերը, այս թարախը որ կը խեղդեն զայն։ Այո, այնպէս է։ Մառի, բան մը գտիր ինծի։

—Ի՞նչ, տիկին։

—Խոզովակ մը, սագի փետուր մը... չեմ գիտեր...։

Ազախինը պառաւուհիին նայեցաւ՝ անոր կարծիքն հասկնալու պէս։

—Հնազանդէ, ըսաւ այս վերջինը։

—Շատ վտանգաւոր է, տիկին։

Տիկին տը Մերիան անտարբեր շարժում մը ըրաւ։

Կը հասկնար իր աղջկան անձնուիրութիւնը։ Կը հասկնար զայն վարող գաղափարը. ամբոխել տղան... Մայրը կը տառապէր խեղճ փոքր էակին տառապիլը տեսնելով։ Կեանքը պիտի տար անոր տառապանքը կարճեցուցնելու համար։ Ինքզինքը չէր խրեր։ Եթէ հրա՛ք մի չի պատահեր, տղան կորսուած էր։ Զպիտի ապրէր մինչեւ տարեկոր Գեւորին գալը որ երկու ժամու ճամբայ ունէր... պիտի ընէր ինչ որ կ'ընէր Բօլին, կեանքը պիտի վտանգէր անոր զաւակին ազատելու համար...

Պառաւուհին ետ դարձաւ։

Բօլին հաստատ ձեռքով, կորովով մը որուն վրայ միտ պիտի սքանչանար տպագրային, Բօլին առաւ խոզովակը, տղուն կոկորդը խոթեց, անոր ծայրն իր բերանը դրաւ և բոլոր ուժովը շնչեց հիւանդութիւնը, կարծես խմելով թարախը, մաքուր օդ ներշնչելով անոր թոքերուն... յետոյ, երբ վերջացուց, երբ զգաց որ արիւնը շուրթերուն կուգայ, վճռեցաւ։ Շնչացում մը ունեցաւ, ձեռքերն օդին մէջ շարժեց և գետին ինկաւ զգայազուրկ։ Բայց տղան կը շնչէր, և երբ մայրն աչքերը բացաւ... անիկա մեղմիւ կը հանգչէր իր փոքր անկողնին մէջ, պառաւուհիին ու տոքթոր Գեորգի աչքին տակ, որ նոր եկած էր...

Աղաղակ մը արձակեց Բօլին։

—Զաւա՛կս։

—Ազատեցաւ, ըսաւ բժիշկը։

—Ազատեցա՞։

—Ազատեցաւ ձեր շնորհիւ։ Գործողութիւնը կատարեցիք, իմ ընդունիքս աւելի աղ։

Բօլին ծնրադիր ինկաւ։

—Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ըսաւ, բոլորովին չէք լքեր զիս։ Օրհնեալ ըլլա՜ս...

Ցեղոյ անկողին վազեց որուն վրայ զաւակը պառկած էր... Դիտեց անոր քնանալը... Երեսն հանգարտ էր, թէեւ շնչառութիւնը տակաւին դժուար։

—Ա՛յ, չե՞ս տառապիր։

—Ամենեւին... Երբ արթննայ բժշկուած է...

—Փողացա՞ւ է։

—Ոչ... Կոկորդի բորբորքում մը... Յուրտ առած ըլլալու է...

—Այս գիշեր... Մայրս պատմե՞ց ձեզի։

—Ձեր փախուստը գիշերանց, սառուցիկ անձրեւին տակ, ձեր զաւկին հետ...

—Այդ վիշտն ի՞նչ է։

—Անտարակոյս։

Բօլին տարի եւաւ։

Աչքերը ցոցիր կարձկէին։

—Այսպէս, ըսաւ, այդ մարդը պիտի մեռցունէր ինչ որ ես կը սիրէի։

Մայրն ու տոքթորը անոր նայեցան, առանց հասկնալու... բայց Բօլին աւելի բացատրութիւն չտուաւ։ Կը վախնար որ չմոլէն աւելի խսած կըլլայ։

ԺԴ.

Ցեռմիջօրէի մը, քանի մը օր յետոյ այն սոսկալի տագնապէն զոր կրած էր, Բօլին տը Մերիան, իր մայրը և տոքթոր Գեորգ, որք այլեւս չէին հեռանար Մերիանի դղեակէն, հաւաքուած էին գեղեցկագրի սրահն երբ նախկին փաստաբան Պ. Լանդէնի այցը ծանուցին... Մեր երեք անձերն իրարու երես նայեցան։

Երեքն ալ նոյն գաղափարն ունէին... Այս մարդ Իրվուա մարքիզին կողմէն կուգար։

(Շարունակի)

Կ. ՊՈԼԻՍ 12,24 ՅՈՒԼԻՍ, 1895

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՑ ՄԷՋ

Երկու դէպքեր օրք այս օրերս տեղի կ'ունենան՝ հանրային գործերու մէջ բարոյականի կարեւորութիւնն զգալի կերպիւ ի վեր կը հանեն։

Այն դէպքերէ մին Անգլիոյ ընտրութիւններն են։ Միւսն ալ Ֆրանսայի մէջ Պատուոյ Լէգէոնի Վարչական Խորհրդին հրաժարումն ու քաքայումն է։

Անցեալ օր յօդուած մը հրատարակեցինք այս խորագրով. «Երեսփոխանը ի՞նչպէս կ'ընտրուին Անգլիոյ մէջ»։ Հոն պարզեցինք թէ երեսփոխանութեան համար ընտրելի մը ո՛րչափ մանրակրկիտ խնամքով կ'որոշուի Անգլիոյ մէջ. թէ ի՞նչպէս անոր ընտանեկան և անհատական վարքն ու բարքը, գործերուն վիճակն, անցեալ և ներկայ հանգամանքները մանրէ կ'անցուին, և անդ. սովորոյթք իրաւունք կուտան հակառակորդ ընտրելիին և անոր մարդոց ալ՝ ընդունուած քանտոտային ներքին կեանքին մէջ թափանցելու և անխնայ քննելու ամեն բան, դրութիւն մը որոյ հետեւանքը կ'ըլլայ անաղարտ բարոյականի տէր մարդիկ միայն անդամ ընտրել Երեսփ. Ժողովոյ։ Անգլիացիք կ'ըսեն թէ քանի որ 39 միլիոն Անգլիացիներու մէջէն 670 հոգի միայն պիտի ընտրուին իբրեւ ներկայացուցչ ազգին, անկարելի չէ ամենէն մաքուր բարոյականի տէր մարդիկն ընտրել, որք միանգամայն քաղաքագիտութեան, վարչագիտութեան, տնտեսագիտութեան և այլ ուսմանց ու փորձառութեանց պահանջուած չափովն օժտուած ըլլան։ Եւ բարոյականը կը պահանջէն ո՛չ միայն որովհետեւ ինքնին գովելի և պատուաբեր ձիրք մէ, որովհետեւ մարդկութեան կանոնաւոր վիճակն է, այլ և զի անհատական բարոյականն հիմ կը նկատուն հանրային բարոյականի, և ընդունելով հանդերձ թէ կրնայ պատահիլ որ անհատական կեանքի մէջ շատ մաքուր բարոյականի տէր չեղած մէկն հանրային գործերու մէջ օգտակար դեր մ'ունենար ըլլայ, կ'ըսեն թէ ասիկա բացառութիւն է, և կը սիրեն թէ նա՛ որ անհատական կեանքի մէջ բարոյական սկզբունքներու չի հետեւիր, բնական բերում մ'ունի հանրային կեանքի մէջ ալ շատ խղճամտ ընթացքի մը չհետեւելու։ Այս սկզբունքներու և այս վարժութիւններու հետեւութիւնն այն է որ բարոյական նկարագրի կողմէ Անգլիոյ Երեսփ. Ժողովը տեսակին մէջ առաջին մարմին է։ Այս է անշուշտ պատճառն որ այդ Ժողով խարէական հնարքներու այնքան դիւրաւ զոհ չ'ըլլար, և հանրային գործերու մէջ անշահախնդրութեան գրօշը շատ վեր կը բռնէ։

* * *

Ֆրանսայի մէջ անհատական բարոյականի այնքան կարեւորութիւն չի տրուիր։ Բաւական է որ մարդ իւր հրապարակային պաշտօնին մէջ ուղիղ, անշահախնդիր, ճշդապահ ըլլայ, վեհանձն Ֆրանսայիք աւելին չեն փնտռեր։ Ինչպէս որ նախանձախնդիր են խղճի ազատութեան, (և ասոր համար կրօնասէրներուն կասկածով կը նային և մայրապետները կը տարապրին), անհատական կեանքն ալ անբռնաբարելի կը համարին։ Այս երկու տարբեր սկզբունքներու ի նպաստ և ընդդէմ շատ բան կրնայ զրուցուիլ։ Բայց աւելի դիւրին է՝ սկզբունքներու ճշդութիւնն և օգտակարութիւնն իրենց արդիւնքէն դատել։

—Այս գործնական հայեցակետէ նայելով խնդրոյն վրայ, ի՞նչ կը տեսնենք։

—Ֆրանսայի Խորհրդարանին կրկին ժողովներուն մէջ ալ դանուեցան մարդիկ որք իրենց խիզձը վաճառեցին, և հետեւանքն եղաւ Բանամայի ահագին խաբեբայութիւնն, որոյ պատճառաւ Ֆրանսայի ժողովուրդն իբր երկու միլիառ ֆրանք տուժեց ու շատ տուներ կործանեցան։

Եւ այս Բանամայի գայթակղութեան բազմատեսակ մնախորդ հետեւանքներէն մին էր նաև Պատուոյ Լէգէոնի Վարչութեան նման պատուաւոր մարմնոյ մը տապալումը. զի Բանամայի խաբեութեան շահատակներէն մին Է. յ. ֆէլն էր, իբր Բարերոնի Աշտարակին տնօրէնի չափէն աւելի համբաւ շահած Է. յ. ֆէլն, որ բազմաթիւ միլիոններ զրպանած էր՝ շինութեան ոչինչ մէկ մասին օգնած ըլլալուն համար։ Այս մարդ դատարաններէ վերջնական վճիռ կրած չ'ըլլալով, օրէնքի առջեւ բոլորովին դատապարտուած չէր, բայց անհատական բարոյականի տեսակէտով իւր ընվիճաքը եպերելի էր։ Պատուոյ Լէգէոնի Վարչութիւնը, Ֆրանսայի պատուանշանն այն անարժան մարդուն կուրծքէն քակել հանելու համար, կը սպասէր որ վճռագիր մը իրեն ցոյց տրուէր։ Անհատական կեանքն ի հաշիւ չառնելու և պաշտօնական ձեւակերպութիւնները պաշտելու սովորոյթն այս աստիճան արմատացած է Ֆրանսական բարքերու մէջ։ Երեսփ. Ժողովը չկրցաւ հանդուրժել այսքան ակներեւ անիրաւութեան, և Է. ֆէլի պէս խաբեբայի մը անունը տակաւին պաշտօնապէս պատուուած և մեծարուած անձնաւորութեանց կարգին մէջ պահող Վարչական Խորհրդին դէմ իւր տհաճութիւնն յայտնեց օրակարգով մը, որ Զօր. Ֆէվրիէի և ընկերայց հրաժարման պատճառ եղաւ։

* * *

Բանամայի գայթակղութենէն առաջ կը յիշէք թէ ուրիշ գայթակղութիւն մը բաւական անդամ գաղափար տուաւ կարգ մը Ֆրանսացի հանրային մարդոց անհատական բարոյականին վրայ. այն է՝ պատուանշանները տարբեռաւոր։ Այն ատեն Ֆրանսայի համար զարմանալի պատմութիւններ գրուեցան գրամին խաղացած դերին վրայ պատուանշանները բաշխման առթիւ։ Դար մը գտնէ եւ պէտք էր երկայ՝ այսպիսի բարքեր գտնելու համար Անգլիոյ մէջ։

Տարակոյս չկայ թէ այսպիսի գայթակղութիւնք գրեթէ անկարելի կ'ըլլային եթէ այն համոզումը տիրէր ֆրանսացի ընտրողներուն մէջ ալ թէ անհատական բարոյականն ի վերջոյ կ'ազդէ հանրային բարոյականին վրայ. թէ մարդ ընդարձակ շրջանակի մը մէջ ինքն իրեն անշուշտ պիտի ներէ նոյն թերութիւններ զորս անձուկ շրջանակի մը մէջ արդէն կը դատէ. թէ վարդապետական ինչպէս և գործնական տեսակէտով անխուսափելի է սերտ յարակցութիւն մը անհատական կամ ներքին բարոյականին և հանրային կամ արտաքին բարոյականին միջեւ։ Երկուց ժողովրդոց ըմբռնումի տարբերութիւններն ե՛ւս առաւել զգալի ընելու համար, դիտեցէք որ անգլիացի ժողովրդին ամենէն աւելի սիրած և վստահած մարդիկն անոնք են ճշդիւ որք նաեւ անհատական անարատ բարոյականի տէր են իրաւամբ, որք ո՛չ միայն հրապարակային գործերու մէջ այլ և անհատական վարքի ու բարքի մէջ օրինակելի մարդիկ են։ Այս է պատճառ կատաղութի մը, (հանգուցեալ) Ճոն Պրայդի մը, Պիքընֆիլտի մը վայելած ժողովրդական պաշտամունքին, զի մուտքը ձիրքերու հետ միացուցած են անարատ բարոյական ալ։ Բանամայի Ընկերութենէն կաշառուող հանրային շինութեանց նախարար Պայհօ մը Անգլիոյ մէջ երեւակայելի անդամ անկարելի է, ինչպէս պիտի խոստովանին ամեն անոնք որ ճշդապէս գիտակ են անգլիական բարքերու և գործքերու։ Ուիլսոն մը գտնիւու համար պէտք է եւս երթալ մինչեւ ԺԸ դարու անգլիական բարքերն։

* * *

Անգլիացիք, գիրաւանցապէս գործնական ժողովուրդ, սապէս կը տարմարանեն այս թէզրոյ մէջ։ «Երբ մէկու մը հետ առեւտրական գործ պիտի հաստատենք, ապէկ մը հարցուփորձ կ'ընենք կ'իմանանք թէ ի՞նչպիսի մարդ է, ի՞նչ ունակութեան տէր, խմո՞ղ է, չամա՞ղ է, ամուսնացա՞ծ է թէ ամորի, սուտլո՞ւց է թէ ճշմարտասէր։ զի կ'ըզգանք թէ ո՛վ ոք ըլլայ՝ իր անձնական վարքն ու բարքի հարկէ պիտի ազդէ իւր առեւտուրին վրայ։ Բայց ի՞նչպէս այս բաները չփնտռենք այն մարդոցմէ որոց պիտի յանձնենք 100 միլիոն ոսկի մեր ազգային եկամտացոյցիս մատակարարութիւնն, որոց պիտի վստահինք օրէնքներ շինել մեր իմացական, բարոյական և տնտեսական զարգացման համար, լիակատար իշխանութիւններով սահմանին Տերութեան մը վրայ։ Խոնարհի մը, գործարանի մը մատակարարութեան մէջ խնդրուած ձիրքերն ի՞նչպէս չփնտռուին հանրային իրաց և գործոց մատակարարութեան մէջ։ Ծուռ քանակէն ուղիղ գիծ չելներ վերջապէս, և հանրային գրամոց ուղիղ մատակարարութեան հսկելու պաշտօն ունեցող մեր պատուիրակներ պէտք է որ իրենք չարաչար գործածած չըլլան ուրիշին գրամն, իրենց գործերն ուղղամտութեամբ կառավարած ըլլան, և հանրային բարոյականի պահպանման ու բարձրման համար օրէնք դնելու պաշտօն ունեցող մեր ներկայացուցիչներ պէտք չէ որ իրենց անհատական կեանքի մէջ նոյն բարոյականի սկզբունքներն ոտքի տակ առած ըլլան, և ևն։ և ևն։

Այս գործնական իմաստասիրութեան շնորհիւ է անշուշտ որ Անգլիոյ խորհրդարանին բարոյական նկարագիրն այնքան նպաստաւոր կերպիւ կ'ընայ ի կշիռ գալ Ֆրանսայի խորհրդարանին բարոյական նկարագրին հետ, և թէպէտ ոչ սակաւ Անգլիոյ մէջ ալ կան ամեն բան նշանակելու պատրաստ լրագրեր, բայց հանրային մարդոց գայթակղութիւնք այնքան սակաւաթիւ և անկարեւոր են Անգլիոյ մէջ բաղդատմամբ Ֆրանսայի մէջ եղածներուն։ Ահա՛ գործնական դաս մը որոյ վրայ կ'արժէ որոճալ պահ մը։

Բ. Գ.

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԸՆԴՈՒԹԻՒՆՔ ԱՆԳԼԻԱ.— Եորքի Արքեպիսկոպոսն հովուական գիր մը ղրկելով իւր թեմին մէջ կազմուած Թագաւոր-եկեղեցական խորհուրդներուն, պատուիրեց որ Եկեղեցին մէջտեղը չընեն ընտրական պայքարին. զի Եկեղեցին ո՛չ ազատական է ո՛չ պահպանողական, ամեն կուսակցութենէ ալ կը վերաբերի, և ամեն կուսակցութենէ ալ հաւատացեալ ունի իւր մէջ։ Ամեն ոք իւր խղճին համեմատ պէտք է քուէ տայ այն ընտրելիին զոր յարմարագոյն կը տեսնէ անգլ. ազգին բարոյական ու նիւթական շահերը պաշտպանելու և զարգացման գարկ տալու։

—Այսուհանդերձ ազատական լրագիրք կը գրեն թէ անկիլիքան կղերը ներկայ պարագային մէջ առհասարակ միութենականաց-ազատականներուն և ապահովականներուն քուէ տուաւ. զի զգոհ էր Լորտ Ռոզպերիի նախարարութեան ներկայած Կալլէսի եկեղեցական օրինագծէն։ Անգլիոյ մէջ ո՛չ մէկ եկեղեցական երեսփոխան կրնայ ընտրուիլ, ո՛ր դաւանութենէ ալ ըլլայ. բայց ամեն եկեղեցական ընտրող է, և թէպէտ եկեղեցւոյ մէջ կամ եկեղեցական հանգամանքով ի նպաստ այս կամ այն կուսակցութեան չի կրնար խօսիլ, բայց իբրեւ քաղաքացի ուրիշ ամեն ազատութիւն կը վայելէ ամեն անգլիացի հպատակի նման։ Անկիլիքան Եպիսկոպոսք ի ընէ անդամ են Լորտերու Ժողովոյն։ Բաց ասոնց, անկիլիքան Եպիսկոպոսք ունին Եկեղեցական Խորհրդարան մը, կամ լաւ եւս՝ Եկեղեցական Մերկայտ մը, որուն հանդէպ եկեղեցական Երեսփ. Ժողով մը կը կազմեն եպիսկոպոսական ասոիճանէն վար գտնուող անկիլիքան ուրիշ եկեղեցականք, ընտրուելով իրենց դասակարգին քուէներովը։

Պ. ՃՈՆ ՄՈՐԼԻ՝ պարտութեան հետ, զոր Աբե-Լէյի երեկուան թուով ծանուցինք, չորսի հասաւ թիւն այն ազատական նախարարներուն որք մերժուեցան իրենց ընտրողներուն կողմէ. Սըր Ուիլիըմ Հարքորդ, Պ. Ճոն Մորլի, Պ. Արնոլտ Մորլի և Պ. Շօ-Լեֆէվր։ Ասոնց վրայ պէտք է աւելցնենք ազատական նախարարական խորհրդականներն եւս որք չկրցան ընտրուիլ, Սըր Ճոն Հիպպէրդ, Պ. Էվզըն-Կոուբը և Պ. Ա. Պրէնտ, (այս վերջին երկուքը «խաղաղանք» ազատական կուսակցութեան)։ Մերժուած այս առաջնակարգ ազատական երեսփոխաններէն միայն Սըր Ուիլիըմի համար ամոռ մը գտնուեցաւ մինչեւ հիմա։

— Լիվերբուլ իւր միակ ազատական երեսփոխանն եւս մերժեց այս անդամ և բոլորովին միութենական երեսփոխաններ ընտրեց։ Լէնդէյիր ճարտարագործ նահանգը գրեթէ ամբողջովին Միութենականներուն անցաւ այս անդամ։ Հարուածեալ ազատական նախարարներէն Սըր Հէրի Բէմպրը Պէնըրմէն, պատերազմական նախարարն, որոյ դէմ քուէն պատճառ եղած էր ազատական վարչութեան անկումն, կրցաւ յաջողապէս վերընտրուիլ ի Սաֆրիլնկ։

ԻՌԼԱՆՏԱՅԻ մէջ Փառնէլեանք, որք Լորտ Ռոզպերիի վարչութեան դէմ դարձած էին, կը ծաղրեն Ազատականաց պարտութիւնն, և կ'ըսեն թէ անոնք իրենց խոստումներուն թերացան ու արժանի էր որ այս անդամ մերժուէին ընտրողներէն։ «Մէք անոնցմէ Իսլանտայի տնտեսական և ընկերական կացութեան ճար մը կը խնդրեինք, իսկ անոնք ճառով կը պատասխանէին մեզ», կ'ըսեն Պ. Ճոն Ռէմմոնտ հետեւորդը։ Ինչպէս Հեռագիրն արդէն ծանոյց, Պ. Ռէմմոնտ ոչ միայն կրցաւ վերընտրուիլ, այլ և երկու աթոռ կորցուց Պ. Ճրսդին Մաքարթիի հետեւողներէն, որք Հակափառնէլեան անուամբ ծանօթ են, այսինքն՝ Ազատականներուն հետ դաշնակից են Միութենականներուն դէմ։

ՖՐԱՆՍԱՅԻ կառավարութիւնն յատակագծեր պատրաստեց մեծ գիտարանի և գինուորական մարերանոցի մը կառուցման համար Քալէի մօտերն, որպէս զի պատերազմի ժամանակ Մանշի ծովուն մէջ գործող ֆրանսական նաւատորմը պաշարի և ռազմամթերքի հաստատ մթերանոց մը առնեն ունենայ ամեն վայրկեան։ Բնաւ տարակոյս չունի նախարարութիւնը թէ երեսփ. Ժողովը պիտի քուէարկէ այս նպատակաւ խնդրուելիք վարկը։

ՖՐԱՆՍԷ ԵՒ ՌՈՒՍԻԱ.— Ֆրանսական թերթ մը կը գրէ թէ՝ իբրեւ պատասխան Անգլիոյ և Իտալիոյ նաւատորմերուն եղբայրակցութիւն ի Բորդամաթ՝ կը խորհուի այցելութեանց փոխանակութիւն մը Պ. Ֆէլիքս Ֆոռի և Ռուսիոյ կայսր միջեւ։ Գլխաւոր խնդիրն այն էր թէ ո՛վ պիտի ընէր առաջին այցելութիւնն։ Այս դժուարութեան տեղի չի մնար. զի Զարին թագաւորութիւնն 1896 մարտ ամսուն պիտի ըլլայ և կանոն է որ Զարը թագ չդրած դուրս չելներ երկրէն։ Ուստի, Պ. Ֆէլիքս Ֆոռ պիտի հրաւիրուի ներկայ ըլլալ թագադրութեան։ Որովհետեւ օտար վեհապետք չեն հրաւիրուիր այն արարողութեան, Զարին հրաւէրը բացարձակ բարեկամութեան ցոյց մը պիտի ըլլայ Ֆրանսայի համար։ Մէկ ամիս ետքը, Զարն ու Զարուհին Փարիզ պիտի գան պաշտօնապէս։— Այս ամենն աղէկ, բայց ո՞վ գիտէ մինչեւ 1896 մարտ—ապրիլ ամիսները գեռ ի՞նչ կարգադրութիւնք պիտի ըլլան Ռուսիոյ և Ֆրանսայի միջեւ։

ՆՈՐ ՀՆԴԻԿ ԵՐԵՍՓԻԽԱՆԸ.— Մրցզրը Մանչըսթրի Մրբուանձի Պրօտեսթանկերի, Լոնտոնի հիւսիս-արեւելեան Պէթնըլ Կրին շրջանակին պահպանողական նորընտիր երեսփոխանը, բնիկ Ցոմպայցի է։ Տեղւոյն Էլիզիանցան Քոլէճ անգլ. կրթարանին մէջ կրթուած էր. հոն հրատարակուող Սդէրտէն (Պետական Մարդ) անգլ. թերթին խմբագիր եղաւ, և 1872ին իւր հօր յաջորդեց իրրեւ պետ Պուունակերը բնիկ Պետութեան Ցոմպայի գործակալութեան։ Առաջին անդամ 1882ին Լոնտոն գնաց, և փառաբանական ուսման պարապելով ի Լինքըլնս Ին, 1885ին անդամակցեցաւ անգլ. փաստաբանական դասակարգին, և 1886ին դաղթային և բնիկ Ցուցանդէսին մէջ իւր պատկանած բնիկ հնդիկ Պետութեան ներկայացուցիչ եղաւ։ Գնդարուեստից Ընկերութեան անդամակցեցաւ, և զրամ հանդանակելով, Լոնտոնի Կայսերական Հաստատութեան մէջ հնդկական մասնաւոր շէնք մը կառոյց։

ՄԱՏԱՆԱՔԱՐ.— Նորդ Տամ դը Սայլֆրանսական փոխադրանաւն անցեալ շաբթու Մարսիլիա հասաւ Մատակաքարէ 300ի չափ հիւանդ գօրք բերելով։ Անոնցմէ 10ը ճամբան մեռած էին։

ՌՈՒՍԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՄԸ մտցուած է Պուկարիոյ վարժարաններուն մէջ։ Տարրական դասարաններէն վեր դասագիրքերն ալ ռուսերէն ըլլալ որոշուած է, նկատելով որ մանկավարժական տեսակէտով Ռուսք աւելի յառաջացեալ են քան Պուլկարները։ Տ. Բէլման եպիսկոպոս ըսաւ Փեդերպուրկի մետրապոլիտին թէ ժամանակաւ Ռուսիա իւր օրինաւոր քրիստոնէութիւնն, իւր զերն ու դպրութիւնն և քաղաքակրթութիւնն Պուլկարներէն ստացած էր ձեռամբ որոցն կիւրեղի և Մեթոտիոսի, և կրթական տեսակէտով նմանօրինակ ծառայութիւն մը պատուոյ

ԱՆՑԱԴԻՐ. — Ձեռնհաս խչխանութիւնք նկատելով որ գաւառացիներէ ոմանք թէեւ երկար ատեն մայրաքաղաքի մէջ մնալով արհեստով մը կզբաղին, սակայն երբ իրենց ծննդավայրերը կամ ուրիշ տեղ մը երթալու ըլլան, անցագիր ստանալու համար՝ իմամներու, մուխթարներու, Պատրիարքարանց, խարամարանի և խանեբու սենեկապահներու կողմէ տրուած ծանուցագրերու մէջ (էլմո-խապէր) կը նշանակուի որ իբրեւ թէ մէկ քանի օր առաջ գործի համար մայրաքաղաքս եկած են և նորէն պիտի երթան և թէ իրենց անցագրերը կորսնցուցած են, նկատելով որ այս պարագան դիւրութիւն կընծայէ կարգ մը արհեստաւորներու ու գործաւորներու՝ տուրքի հաշուէ իրենց ունեցած պարտքը չվճարելովուզած տեղերնին երթալու համար և նկատելով որ այդ կարգի ծանուցագիր տուողներն ըստ օրինի պատասխանատու են, այդ առթիւ հարկ եղած զգոյշը պիտի ընէ իմամներուն, ոչ-իսլամ հասարակութեանց մուխթարներուն և խանեբու սեռնակապահներուն։

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ վերատեսչութիւնը ծրագիր մը պատրաստած է, որով ինչ ինչ բարեփոխումներ կառաջարկէ անցագրոց կանոնադրոյն այն մասին համար, որ կը վերաբերի՝ Պոլսոյ և Ղալաթիոյ կողմը յատուկ տեղեր չունենալու՝ անցագիրները քննելու համար։ Վերատեսչութիւնը այդ բարեփոխումներն առաջարկած է՝ օրպէս զի անցագրոց քննութեան գործն աւելի կանոնաւոր կերպով կատարուի։ Ներքին գործոց նախարարութիւնն, այդ ծրագրին պարունակութիւնն ընդունելի դատելով, մատուցուած է զայն Բարձր. Մեծ-Եպարքոսին։

ԲԱՐԱՆԹԻՆԱ.— Առողջապահական ժողովին որոշած է որ Իսկէնտերունէն մինչեւ Սէվիտէյ գտնուած ծովեզերեայ քաղաքներէն մեկնող նաւերն երէկուէ սկսեալ հինգ օրուան քարանթինի ենթարկուին՝ իբր նախազգուշութիւն։

ՖԷՍԽԱՆԷԻ գործարանին մէջ պատրաստուած չուխաները ներկելու համար Անգլիէն բերուած վարպետին կողմէ ներկուած մէկ քանի կեպասներ գնահատուեր են և ուրիշ մէկ քանի կերպասներն ալ յանձնուեր են ներկուելու համար։ Ասոնք ալ եթէ ընդունելի դատուին, անգլիացի այդ վարպետին պաշտօնավարութեանը համար պայմանագրութիւն պիտի կնքուի։

ԱՔԵԱ-ԴԱՄԱՍԿՈՍ։ երկաթուղոյ արտօնատէր Պ. Բիլինկի պահանջմանց համար Պետական Խորհուրդն որոշած է մերժուելու պատասխան տալ։

ԵԼՄՏԱԿԱՆ նախարարութիւնն ի մտոյ Սպարապետի Դուռը պիտի դրկէ ելմտական ներկայ տարւոյ ամսաթուակաց առաջին մասին հեղինակները։

ՊՈԼՍՈՅ ձիւնի Մէյտանի թաղը՝ անանձնաբաժանական վարժարանին մօտ կառուցուելու վրայ եղող անասնոց հիւանդանոցին շինութիւնն աւարտելու վրայ է։

ՋՐՀԱՆԿԻՐ զօրաց կառքերուն թիւն որոշուած ըլլալով աւելցնել, Հունգարիէն 48 ձիեր պիտի բերուին։

ՏԱՍԱՆՈՐԴ.—Ելմտական նախարարութիւնը հրահանգ ղրկած է ամեն կողմ, գանձել անցեալ տարուան տասանորդի տրոց անվճար մնացած մասերը։

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՑՐԻՑԷԻ տնօրէն Հիւսէյին Խաքի էֆէնտի, որ ժամանակ մը ի վեր հիւանդ էր, սկսած է ապաքինիլ։

ՀԱՃԸՆԻ մէջ հայ-հռոմէականաց յատուկ եկեղեցի մը շինելու համար արտօնութիւն շնորհուած է։

